ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՁՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզիԿաթնաջուր
համայնք, ՀՀ Լոռու մարզ, գ.Կաթնաջուր, 13 փող. 1, Հեռ.
(099) 000302 , katnajur.lori@mta.gov.am

N 83
19 հունիս 2018թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի ավագանու 2018թ.-ի հունիսի 15-ի թիվ 17, թիվ 18-Ա և թիվ 19 որոշումները:

Առդիր՝ 1 (մեկ) ֆայլ:

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՊԱՊՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կաթնաջուր համայնք, գ. Կաթնաջուր
հեռ. 099-00-03-02

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<15>> ՀՈՒՆԻՍ 2018 ԹՎԱԿԱՆ N 17

ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018Թ-Ի ՀՈՒՆԻՍԻ 15-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով,

Կաթնաջուր համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Կաթնաջուր համայնքի ավագանու 2018թ.-ի հունիսի 15-ի նիստի օրակարգը

Օրակարգ

Կաթնաջուր համայնքի ավագանու 2018թ.-ի հունիսի 15-ի նիստի

1. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին
2. Կաթնաջուր համայնքի համայնքային սեփականություն համարվող «ЮМЗ» մակնիշի էքսկավատորի վարձակալության տրամադրման պայմանները սահմանելու մասին

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Աղազարյան Ջիվան			
Թորոսյան Մերուժան			
Ղազարյան Ազատ			
Պապոյան Մանվել			
Սիմոնյան Գագիկ			

Կաթնաջուր համայնքի ղեկավար՝ _____ Արմեն Պապոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կաթնաջուր համայնք, գ. Կաթնաջուր 13 փ. 1շ.
հեռ. 099-00-03-02

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» ՀՈՒՆԻՍ 2018 ԹՎԱԿԱՆ N 18-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 16-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝
Կաթնաջուր համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Աղազարյան Ջիվան			
Թորոսյան Մերուժան			
Ղազարյան Ազատ			
Պապոյան Մանվել			
Սիմոնյան Գագիկ			

Կաթնաջուր համայնքի ղեկավար՝ _____ Արմեն Պապոյան
(անհրաժեշտությունը) (անուն, ազգանուն)

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի ավագանու
2018թվականի հունիսի 15-ի N 18-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Մանուկյան Ռոզա Վարուժանի - 20000 (քսան հազար) դրամ, /երեխայի ծննդյան գումար/
2. Վարդերեսյան Արևհատ Գուրգենի - 20000 (քսան հազար) դրամ, /երեխայի ծննդյան գումար/
3. Զարչյան Լուսինե Վալերիկի - 20000 (քսան հազար) դրամ, /երեխայի ծննդյան գումար/

ԿԱԹՆԱՋՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ _____ Վ. Վարդանյան
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«15» ՀՈՒՆԻՍ 2018 Թ. ԹԻՎ 19-Ա

ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ «ԽՕՄՅ» ՄԱԿՆԻՇԻ ԷՔՍԿԱՎԱՏՈՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21 կետով.

Կաթնաջուր համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն Կաթնաջուր համայնքի համայնքային սեփականություն համարվող «ԽՕՄՅ» մակնիշի 36-49 LS պետհամարանիշի էքսկավատորը վարձակալությամբ օգտագործման տրամադրելուն.

2.Սահմանել Կաթնաջուր համայնքի համայնքային սեփականություն համարվող «ԽՕՄՅ» մակնիշի 36-49 LS պետհամարանիշի էքսկավատորի վարձակալության տրամադրման պայմանները և վարձավճարի չափը.

Վարձակալության տրամադրման եղանակը	Վճարի չափը /ՀՀ դրամ/
Ժամավճար	1000 (հազար)
Օրավճար	5000 (հինգ հազար)
Ամսավճար	120000 (հարյուր քսան հազար)

3. Համայնքի ղեկավարին՝ համայնքային սեփականության տեխնիկան վարձակալության տրամադրելու դեպքում վարձակալող քաղաքացու հետ կնքել տեխնիկայի օգտագործման երկկողմանի պայմանագիր, որտեղ պարտադիր նախատեսել տեխնիկայի օգտագործման և տեխնիկայի անխափան ետ վերադարձման հետ կապված փոխադարձ պարտականությունները:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Աղազարյան Ջիվան			
Թորոսյան Մերուժան			
Ղազարյան Ազատ			
Պապոյան Մանվել			
Սիմոնյան Գագիկ			